16442

361
П-64

Ш-р

2002

2010

361
Ռ-64
370
2384-56
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս.Ս.Հ.Ռ. Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՆՆԵՐԻ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՆՆԵՐԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԵՐԿԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ
1915 ՅՈՒՆՈՒԱՐ 15—1917 ՅՈՒՆՈՒԱՐ 15

Նախապատրաստական Յանձնաժողով

1914 թուի վերջը Մայր Հայաստանին պատահած մեծ դժբաղդութիւնը ցնցելով ամենուրեք ցրուած հայ ժողովրդին՝ չէր կարող չշարժել նաև Թիֆլիսի Հայ ծխական համայնքը, ուստի և 1915 թուի յունուար 2-ին Թիֆլիսի նախկին առաջնորդ ս. Մեսրոպ եպիսկոպոսի հաճութեամբ Թիֆլիսի Հայ եկեղեցիների Միաբանութիւնները, ծխական Հոգաբարձութիւնները և երեցփոխները ընդհանուր ժողով գումարելով Առաջնորդարանում՝ ընտրեցին 10 հոգուց բաղկացած մի Յանձնաժողով ծրագիր մշակելու Տաճկաստանից և Պարսկաստանից Ռուսաստան փախչող հայ գաղթականներին խնամելու և այդ նպատակի համար միջոցներ հայթայթելու համար։

Յանձնաժողովի կազմը հետևեալն էր.

Աղանեանց Գիւտ ա. ք.—նախագահ, Աբաղեանց Յովսէփ, Համբարձումեանց Համազասպ.—քարտուղար, Ճօնեանց Գալուստ, Մինասեանց Երուանդ բժ., Մեհրաբեանց Գէորգ ա. ք., Շիրոյեանց Սարգիս ա. ք., Շահվերդեանց Սիմէօն, Սահակեանց Սահակ ք., Տէր-Յովհաննիսեանց Համազասպ ա. ք.։

Նախապատրաստական Յանձնաժողովը 10 օրում մշակեց գործունէութեան ծրագիր և առաջարկեց ծխական համայնքի՝ 1915 թուի յունուար 13-ի ընդհանուր ժողովին. միևնոյն ժամանակ օգտուելով ծննդեան տօներից՝ կազմակերպեց եկեղեցիներում և հանգստարանում հանգանակութիւն յիշեալ նպատակի համար։ Ահա այդ ծրագիրն ամբողջութեամբ.—

Ծրագիր

Թիֆլիսի Հայ եկեղեցիների Միաբանութիւնների և Հոգաբարձութիւնների գործունէութեան.

Կազմ.—Թիֆլիսի Հայ եկեղեցիների Միաբանութիւնների և Հոգաբարձութիւնների գործունէութիւնը սահմանում է ընդհանուր ժողովը, որին մասնակցում են Թիֆլիսի բոլոր հայ եկեղեցիների միաբան քահանաները և ծխական հոգաբարձութիւնները, իսկ ուր հոգաբարձութիւն չկայ՝ երեցփոխանները։

Նպատակը.—Թիֆլիսի Հայ եկեղեցիների միաբանութիւնների և Հոգաբարձութիւնների միութեան նպատակն է օգնութիւն հասցնել պատերազմական աղէտներից փախած կարօտեալ գաղթականներին։

Միջոցներ.—Միութեան միջոցներն են՝ դրամ և կենսական ամեն տեսակ պիտոյքներ։

Աղբիւրներ.—Միութեան աղբիւրներն են. 1. ծխական տուրք, նուէրներ, հանգանակութիւն և օրէնքով թոյլ տուած ամեն տեսակ մուտքեր։ Եւ 2. կենսական պիտոյքներ։

Գործադիր մարմին.—Միութեան գործադիր մարմինը ընտրւում է ընդհանուր ժողովից 10 հոգուց բաղկացած և կոչւում է «Թիֆլիսի Հայ եկեղեցիների Միաբանութիւնների և Հոգաբարձութիւնների Յանձնաժողով»։

Գործադիր մարմնի իրաւունքները.—Գործադիր մարմինը միութեան նպատակն իրագործելու համար սահմանում է ծխական տուրք, որ գանձում է իւրաքանչիւր եկեղեցու հոգաբարձութիւնը եկեղեցու միաբանութեան հետ և իւրաքանչիւր հոգաբարձութեան հաւաքած տուրքը յանձնում է գործադիր Յանձնաժողովին, ժողովարարութիւն է անում, հաւաքում է կենսական պիտոյքներ, այն է՝ ուտեստ, շոր և անկողին։

Հաշուէտուութիւն.—Գործադիր մարմինը իւր գործունէութեան մասին հաշիւ է տալիս ընդհանուր ժողովին։

Գործադիր Յանձնաժողով

Յունուար 13-ի ընդհանուր ժողովը քննութեան ենթարկելով այս ծրագիրը՝ հաստատեց և ընտրելով գործադիր Յանձնաժողով՝ յանձնեց նրան յիշեալ ծրագիրն ի գործադրութիւն։

Յանձնաժողովի անդամներ ընտրուեցան հետևեալները.

Աղանեանց Գիւտ ա. ք.
Շիրյեանց Սարգիս ա. ք.
Ճուղուրեանց Յարութիւն ք.
Խուցեանց Խորէն ք.
Աբաղեանց Յովսէփ.
Մաղաքեանց Մկրտիչ.
Մինասեանց Եր. բժ.
Մուրատբէգեանց Սարգիս.
Յարութիւնեանց Մելիտոն
Շահվերդեանց Սիմէոն.

Յանձնաժողովը հաստատուեց ս. Առաջնորդի կողմից յունուար 15-ին № 39 պաշտօնագրով և մտաւ իր պաշտօնի մէջ։

Առաջին նիստում Յանձնաժողովը կազմակերպեց իւր Դիւանը—

Գիւտ. ա. ք. Ազանեան—նախագահ.
Բժ. Եր. Մինասեան—փոխ նախագահ.
Յարութիւն ք. Ճուղուրեան և Մել. Յարութիւնեան } քարտուղարներ
Սիմէօն Շահվերդեանց—գանձապահ.

———

Յանձնաժողովը հաշուէտուութեան տարիներում ունեցել է 80 նիստ, որոնց ներկայ են եղել անդամները հետեւեալ թուով՝

Ազանեանց Գ. ա. ք. 75 անգամ, Շահվերդեանց Ս. 71 անգամ, Յարութիւնեանց Մ. 67 անգամ, Աբաղեանց Յ. 67, Խուցեանց Խ. ք. 58 անգամ, Մուրատբէգեանց Ս. 56 անգամ, Մաղաքեանց Մ. 55 անգամ, Ճուղուրեանց Յ. ք. 33 անգամ, Մինասեանց Եր. բժ. 20 անգամ, Շիոյեանց Ս. ա. ք. 9 անգամ։

———

Իր գործունէութեան առաջին իսկ օրից Յանձնաժողովը, համաձայն ընդհանուր ժողովի տուած ծրագրի, որոշեց իր գործունէութեան նիւթ ընտրել պատերազմի աղէտներից փախած որբերին պատսպարելու հոգացողութիւնը, բանալով նրանց համար ապաստանարան։

Այսպիսով Յանձնաժողովը 1915 թուի մայիս 15-ին հիմնեց Ղարաքիլիսայում (Երևանի նահանգ) Առաջին հայ որբանոցը 50 հոգու համար։ Որբանոցը բացուեց Ղարաքիլիսայում ժողովրդի ժամանակի տրամադրութեան համեմատ, որպէսզի որբերը կենդրոնացած լինին իրանց հայրենիքին աւելի մօտ՝ բարեպատեհ առիթով հայրենիք վերադարձնելու համար և միւս կողմից նրանց պահելու հայութեան սրտում։

———

Յանձնաժողովիս առաջին որբանոցը Ղարաքիլիսայում

Ղարաքիլիսայի որբանոցի համար Յանձնաժողովս վարձեց մի լուսաւոր և մեծ բնակարան գիւղի օդաւէտ և ամենաբարձր մասում. բնակարանը բաղկացած էր երկու յարկից,—ներքինը յատկացուեց ննջարանի, իսկ վերինը սեղանատան և պարապմունքների համար։ Բնակարանի առջևը կար ընդարձակ բակ որբերի խաղալու համար և մի մեծ այգի։

Մեծ դժուարութիւններով կարելի եղաւ տայլերով տեղափոխել այնտեղ 50 երկաթի մահճակալ և մնացեալ կարասիքն ու մթերքը։

Որբանոցի կառավարիչ ընտրուեց պ. Արծիւ Աբովեանը (ճեմարանաւարտ) և նրան օգնական օր. Հռիփսիմէ Յարութիւնեանը, որ ծխական դպրոցներում կարուձևի վարժուհու պաշտօն էր վարել։

Որբերի ընտրութեան ժամանակ Յանձաժողովս ղեկավարուում էր հետևեալ կանոններով.—պէտք է ունենային 6—10 տարեկան հասակ, երկու սեռից և ծնողներից զուրկ, թէպէտ և Յանձնաժողովս հանգամանքներից ստիպուած երբեմն դուրս է եկել այս կանոնից։

Ղարաքիլիսիայում մեր որբանոցի մերձաւոր հսկողութիւնը Յանձնաժողովս յանձնել էր տեղական հայ դպրոցի Հոգաբարձութեան, որը, և մանաւանդ Հոգաբարձութեան անդամ պ. Նալբանդեանը, սիրայօժար կատարեցին այդ պարտաւորութիւնը, իսկ հիւանդ որբերին պատրաստակամ սիրով խնամում էր Հոգաբարձութեան նախագահ բժ. Վարդանեանը։

Որբանոցը մնաց Ղարաքիլիսայում մինչև 1915 թուի հոկտեմբերի 4-ը։

Այդքան ժամանակում որբանոցում եղել են 37 որբ—աղայ և աղջիկ։

Որբանոցի ներքին կեանքը Ղարաքիլիսայում հետևեալ պատկերն է ներկայացնում.—

ա. երեխաները վեր էին կենում առաւօտը 7 ժամին։ Առաւօտ երեկոյ տալիս էինք թէյ հացով, երբեմն պանրով և կաթով. 11 ժամին նախաճաշ և 2 ժամին ճաշ։ (Չորեքշաբթի և ուրբաթ օրերը պասուայ)։

բ. օրուայ ազատ ժամերին կառավարչի օգնական օր. Յարութիւնեանը զբաղեցնում էր մանկական պարտէզի ձեռարուեստով—հիւսել էր տալիս յարդից, սառուարաթղթից, գոյնզգոյն թղթերից զանազան իրեր. իսկ կառավարիչը գրագիտութիւն էր սովորցնում դպրոցական հասակ ունեցող որբերին։

գ. որբերը եկած լինելով զանազան գիւղերից և անվարժ մաքրութեան ու կարգապահութեան՝ ղեկավարները առանձին ջանք էին գործ դնում վարժեցնելու նրանց մաքրութեան և կարգապահութեան մէջ—շաբաթը մի անգամ լողացնում էին, շաբաթը երկու անգամ շոր էին փոխում, վատառողջներին բժշկում էր բժ. Վարդանեանը, մանաւանդ մեծ տոկոս էին կազմում քոս ունեցողները, որոնց տարւում էր առանձին խնամք և շնորհիւ դրա՝ հեռացրեցէ բաւական պակասեց այդպիսիների թիւը։

—

Որբանոցի կեանքը Ղարաքիլիսայում ընթանում էր բաւական կանոնաւոր, քանի որ պատերազմի հետևանքով երկաթուղու գիծը աւելի ազատ էր յարաբերութիւն պահպանելու համար, բայց վերջերը, երբ երկաթուղային յարաբերութիւնը անկարելի դարձաւ և այդպիսով թէ մթերք տեղափոխելը և թէ հսկողութիւնը դժուարացաւ՝ Յանձնաժողովը առանձին մասնաժողով ուղարկեց Ղարաքիլիսա (Աղանեան, Աբաղեան և Մուրատբէգեան) առ տեղեան ծանօթանալու որբանոցի դրութեան և մասնաժողովի զեկուցումը համոզեց Յանձնաժողովին՝ որբանոցը Թիֆլիս տեղափոխել։

Յանձնաժողովիս յաջողուեց ձեռք բերել պ. Թամամշեանի երկյարկ բնակարանը Կրծանիսում անվարձ, հիմնական նորոգութեան ենթարկելով շէնքը և յարմարեցնելով որբանոցի պահանջներին։

1915 թուի հոկտեմբերի 5-ին (Յանձնաժողովը Ղարաքիլիսա ուղարկեց մի մասնաժողով (Աղանեան և Մել. Յարութիւնեան), որի ջանքերով որբանոցը իր բոլոր պատկանելիքներով Ղարաքիլիսայից տեղափոխուեց Թիֆլիս և տեղաւորուեց յիշեալ շինութեան մէջ՝ 37 որբ։

—

Առաջին որբանոցը Թիֆլիսում

Տեղափոխելով որբանոցը Թիֆլիս՝ Յանձնաժողովը զբաղուեց նրան ընդարձակելու և կարգաւորելու գործով։

ա. որոշեց որբանոցի վրայ անմիջական հսկողութիւն ունենալ Յանձնաժողովիս հերթակալ անդամներով, որոնց պարտաւորութիւնն էր վերին հսկողութիւն ունենալ որբերի սնունդի, մաքրութեան, առողջական վիճակի, զբաղմունքների ու դաստիարակութեան վրայ, ինչպէս նաև կատարել բոլոր ծախքերը։

Հերթակալներն իրանց դիտողութիւնները զեկուցանում էին Յանձնաժողովիս նիստերին և կարևոր կարգադրութիւններն անւում։

բ. Յանձնաժողովը, իր սկզբնական որոշման համաձայն, որբերի թիւը հասցրեց 50-ի։

գ. Յանձնաժողովը անհրաժեշտ գտաւ որբերին տալ սկզբնական կրթութիւն և որոշեց դպրոց ունենալ որբանոցում՝ գրագիտութիւն սովորցնելու. 1915 թուի նոյեմբերի 16-ի բացուեց մեր դպրոցը ծխական դպրոցների ծրագրով։ Ուսուցիչ հրաւիրուեց տաճկահայ Թոռնիկ

Խրիմեանը և մի քանի ամսից յետոյ, երբ դպրոցը կազմակերպուեց, հարկ եղաւ հրաւիրել նաև ռուս լեզուի դասատու, որի համար ընտրուեց օր. Հայկանոյշ Սարգսեանը։

Ղ. Յանձնաժողովս ցանկութիւն ունէր դպրոցում մացնել արհեստագիտական և գիւղատնտեսական գործնական պարապմունքներ, բայց որովհետև նիւթականի պատճառով անկարելի եղաւ իրագործել իր ծրագիրը, ուստի և երեխաներն ազատ ժամերին զբաղւում էին բանջարանոցում աշխատելով։

Որբանոցի կեանքը ընթացաւ բաւական խաղաղ, երեխաները բաւականաչափ զարգացան թէ ֆիզիքապէս և թէ մտաւորապէս։ Ֆիզիքական զարգացման մանաւանդ նըպաստում էր ընդարձակ այգին, ուր ամբողջ օրը անց էին կացնում մաքուր օդում և զբաղւում մարմնամարզութեամբ։ Այս բանին պէտք է վերագրել այն հանգամանքը, որ որբանոցում վտանգաւոր հիւանդութիւններ չեն եղել, բացի երկու դժբաղդ կորուստից,—մի որբ զոհուեց թունաւոր խոտ ուտելուն և միւսը—մի հիւանդ ու թուլակազմ որբ էլ—զոհ գնաց փորահարինքին։

Որբանոցի կառավարութեան մէջ 1916 թուի սկզբում հետևեալ փոփոխութիւնը տեղի ունեցաւ.—կառավարիչ պ. Ա. Աբովեանը հեռացաւ, որին փոխարինեց նրա օգնական օր. Յարութիւնեանը։ Վերջինս միայնակ կառավարեց երկու ամիս, որից յետո օգնական նշանակուեց նրան տ. Հ. Թադէոսեանը։ Օր. Յարութիւնեանի բարեխիղճ պաշտօնավարութիւնը առանձնապէս արժանացել է Յանձնաժողովիս գոհունակութեան։ Օր. Յարութիւնեանի՝ II որբանոց տեղափոխելուց յետոյ՝ նրա տեղ հրաւիրուեց տ Մ. Մալէնցեանը։

—

Երկրորդ որբանոց

Որբերի թիւը առաջին որբանոցում հասել էր արդէն 67-ի, որոնց համար թէ շինութիւնն էր անբաւական և

թէ կառավարելը դժուար. միւս կողմից գաղթական որբերի թիւը զգալի կերպով աճելով՝ հարկաւոր էր ընդարձակել Յանձնաժողովիս գործունէութիւնը, ուստի և Յանձնաժողովս որոշեց բանալ երկրորդ որբանոց, տեղափոխելով այնտեղ մեր աղջիկ որբերին, իսկ առաջին որբանոցում տեղաւորել Մեսրոպ սրբազանի առաջարկած 30—35 որբերին։

Դրա համար վարձեց քաղաքիս ս. Սարգիս եկեղեցու բակում մի մեծ շինութիւն, որ և իր հաշուով յարմարացրեց որբանոցին։

1916 թ. հոկտեմբերի 1-ին բացուեց Յանձնաժողովիս երկրորդ որբանոցը, ուր որբերի թիւը հաշուէաւուրթեան տարում հասաւ 50-ի, իսկ առաջին որբանոցում 70-ի։

Որբանոցի հետ միաժամանակ Յանձնաժողովը բաց արաւ այնտեղ դպրոց, նշանակելով ուսուցչուհի Յովնանեան դպրոցասարտ օր. Արուսեակ Յովհաննիսեանին։

Ներքին կեանքը II որբանոցում, ինչպէս և նրա դըպրոցում, մօտաւորապէս նոյնն է, ինչ որ մեր I որբանոցում։

Քաղաքումս զանազան հասատատութիւնների հոգացողութեամբ բացուեցան և ուրիշ որբանոցներ, որոնց աւելանալով՝ նրանց կառավարիչների մէջ միտք յղացուեց ներքին կապ պահպանել որբանոցների կեանքի մէջ միակերպութիւն մտցնելու նպատակով։ Այդ բանի նախաձեռնութիւնը իր վրայ վերցրեց Կենտրոնական Կոմիտէն, ուր Յանձնաժողովն էլ ուղարկեց իր ներկայացուցիչը նախ. բժ. Ե. Մինասեանցին և ապա, սրա հրաժարուելու պատճառով, պ. Յ. Աբագեանցին։

Այս ընդհանուր կապի հետևանքն այն եղաւ, որ Յանձնաժողովս իր որբանոցների համար օգտւում էր Կենտրոնական Կոմիտէի մթերանոցից, ձեռք բերելով մատչելի գնով մթերք և հագուստեղէն և նոյն Կոմիտէի բժշկի խնամքից։ Նաև ստանում էր աւանս իւր ծախսերի համար։

Տնտեսական կառավարութիւն

Մինչև որբանոցի Ղարաքիլիսայից տեղափոխուելը, այն է 1915 թուի հոկտեմբեր ամիսը, Յանձնաժողովս որբանոցը կառավարում էր իր սեպհական ջանքերով հայթայթած միջոցներով։

Այդ միջոցները հետևեալներն էին.—

ա. 1915 թուի յունուար 13-ի ընդհանուր ժողովի որոշման համաձայն Յանձնաժողովն աշխատեց իրագործել ծխական տուրքի գաղափարը, դրա համար շրջաբերականներ և անդորրագրեր ուղարկեց միաբան քահանաներին և ծխական հոգաբարձութիւններին, յորդորելով աջակցել Յանձնաժողովիս այդ գործում։ Այս գործը ցանկալի յաջողութիւնը չունեցաւ, նախ որ բոլորը չմասնակցեցին ծխական տուրքի գանձման և երկրորդ՝ որովհետև մասնակցողներն էլ շուտով վհատուեցան, տեսնելով որ միաբանները և հոգաբարձութիւնները միահամուռ չեն աշխատում։ Թէ որպիսի արդիւնք ունեցաւ ծխական տուրքը՝ ցոյց կտայ դրամական հաշիւը։

բ. Առաջնորդի թոյլատրութեամբ Յանձնաժողովս քաղաքի բոլոր եկեղեցիներում հանգանակել սկսեց կնքուած տուփերով, որ նոյնպէս սկզբում յաջող ընթացք ունեցաւ, բայց վերջերս այն էլ թուլացաւ։

գ. Յանձնաժողովիս անդամների ձեռքով եկեղեցիների բակերում և հանդստարանում կատարւում էին յատուկ հանգանակութիւններ։

դ. Յանձնաժողովս զանազան անձերի շնորհիւ ստացել է բաւականաչափ նուէրներ դրամով և իրերով, որոնց ցուցակը կարելի է տեսնել դրամական հաշուում։

ե. Յանձնաժողովս ցանկութիւն ունենալով աւելի ևս բարեկարգել իր որբանոցը, չբաւականանալով վերև յիշած աղբիւրներով, ուզեցաւ ձեռք բերել մի խոշոր գումար, ուստի և որոշեց միօրեայ հանգանակութիւն կատարել

կնքուած տուփերով։ Մեծ դժուարութեամբ ձեռք բերուեց այդ իրաւունքը և Յանձնաժողովը լոյս ընծայեց «Լումայ» թերթի մի համար հայերէն և ռուսերէն լեզուներով, մասնակցութեամբ մեր գրական աշքի ընկնող ոյժերի, որոնք սիրայօժար ընդունեցին Յանձնաժողովիս հրաւէրը։ Տպուեց և սպառուեց 22,000 օրինակ։

զ. Թիֆլիսի հայ քահանաների ապահովութեան գանձարանի վարչութիւնը իր աջակցութիւնը ցոյց տուեց, տալով ամսական մի հարիւր ռուբլի տասը որբերի պահպանութեան համար։

Այս աղբիւրներով Յանձնաժողովը կառավարեց իր որբանոցը մինչև 1915 թուի հոկտեմբեր ամիսը, որպիսի ժամանակից վրայ հասաւ պետական նպաստը, սկզբում իւրաքանչիւր որբին ամսական 7 ռուբլի 50 կոպէկ, ապա 10 ռուբլի և այժմ 15 ռուբլի։ (Վերջերս Կենտրոնական Կոմիտէն, որի միջոցով Յանձնաժողովս ստանում է պետական նպաստը, 7 ռ. 50 կ. և 10 ռ. պակասորդը լրացրեց, դարձնելով 12 ռուբլի 50 կոպէկ)։

Պետութիւնից ստացած նպաստը ընդհանրապէս չէ բաւարարում որբանոցների պահպանութեան, ինչպէս որ կերևայ մեր հաշուից, ուստի և Յանձնաժողովս շարունակում է կողմնակի աղբիւրներով օգտուել, որ սակայն նախկին արդիւնաւորութիւնը չունի։

Ինչպէս երևում է տեղեկագրիս մէջ առաջ բերած դրամական մանրամասն հաշուից, Յանձնաժողովս մինչև պետական նպաստ ստանալը վերոյիշեալ աղբիւրներից մուտք ունեցել է 8616 ռ. 13 կ. և ծախս 7986 ռ. 56 կ. այնուհետև Պետական նպաստ ստացուել է 16,571 ռ. 69 կ., իսկ ինքը ժողովել է 3,989 ռ. 17 կ., և ծախսուել է 24,522 ռ. 96 կ։ Ուրեմն ընդհանուր մուտք է եղել՝ Յանձնաժողովիս ժողոված 12,605 ռ. 30 կ., պետական նպաստ 16,729 ռ 96 կ. և ծախք 32,509 ռ. 52 կ.։

Որբերի թուի հետ համեմատելով եղած ծախսերը, երևում է, որ առաջին տարին իւրաքանչիւր որբի վրայ ծախսուել է առանց կահաւորութեան ամսական մօտ 18 ռուբլի, իսկ վերջին տարին 27 ռ. 47 կ.։

—

Այցելութիւններ եւ ներկայացուցիչներ

Հաշուէտուութեան տարում Յանձնաժողովիս որբանոցին այցելեցին.

ա. Ազգիս վեհ. Հայրապետը Տ. Գէորգ Ե. իր շքախմբի և թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի հետ 1916 թուի յուլիսի 13-ին, որին ընդունեցին Յանձնաժողովիս նախագահը և անդամները. նախագահը համառօտ ներկայացրեց Վեհին որբանոցիս սկզբնաւորութեան պատմութիւնը և համառօտ հաշիւը։ Վեհափառը մանրամասը դիտելով որբանոցը՝ իր գոհունակութիւնը յայտնեց և օրհնեց Յանձնաժողովի անդամներին։

բ. Ներքին գործերի նախարարութեան ներկայացուցիչ Նեվերովը գաղթականական գործերի լիազօր գեներալ Թամամշեանի հետ, որոնք նոյնպէս գոհ սրտով հեռացան որբանոցից։

—

Յանձնաժողովս իւր մասնակցութիւնը ցոյց տուեց Էջմիածնի Համագումարին, ուղարկելով իբրև պատգամաւոր բժ. Ե. Մինասեանցին առանձին հրահանգով։

Յանձնաժողովս ընդհանրապէս մասնակցել է իր ներկայացուցիչներով քաղաքումս տեղի ունեցած գաղթականութեան վերաբերեալ գրեթէ բոլոր ժողովներին։

—

Յանձնաժողովս քաղցր պարտք է համարում իր խորին շնորհակալութիւնը յայտնել մասնաւորապէս «Լումայ»

թերթին եռանդուն կերպով մասնակցող թէ յօդուածագիրներին, թէ միօրեայ թաղային հանգանակութիւնը կազմակերպող յարգելի տիկիններին և օրիորդներին և պարոններին, հանգանակութեանը օժանդակողներին և թէ թերթը իրանց շրջաններում տարածողներին թէ քաղաքումս և թէ գաւառներում։

Շնորհակալութեան արժանի են և այն ամէն նուիրատուները, որոնք իրանց կարողութեան չափ չզլացան դրամով թէ իրերով օգտակար հանդիսանալ որբանոցին և Յանձնաժողովիս բեռը թեթևացնել։

Թիֆլիսի Հայ Եկեղեցին. Միաբանութ. եւ Հոգաբարձութիւններ։ Յանձնաժողովի որբերի անուանացուցակը սկզբից մինչեւ այժմ։

Տարի	Աղջիկ	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	Հայրանուն	Տարիք	Ծննդավայր (Քաղաք գիւղ)	Գրագէտ է	Ծնող ունի	Հեռացել է
—	1	Ալլավերդեան Գոհար.	Ալլահվեր.	8	Բերդ. (Ալաշկերտ)	ոչ	Հայր	
—	2	Ալլավերդեան Բնար.	»	6	» »	ոչ	»	
1	—	Ալէքսանեան Սարգիս	Ալէքսան	11	» »	այո		
	3	Ալէքսանեան Շողակ.	Ղազար	9	Խոյ			
2		Արտաշեան Անուշաւ.	Արտաշ	10	Գօպալ գիւղ (Խնուս)	այո		
3		Արտաշեան Նիկողայոս	»	6	» » »	ոչ	Հայր	
4		Աւետիսեան Ասքանազ.	Սերոբ	11	Խաչլու » (Ալաշկ.)	այո	»	
	4	Աւետիսեան Թագուհի	Աւետիս	6	Վան	ոչ	»	Հեռացել է
5		Ապանեան Ստեփան	Ալէքսան	13	Էրզերում	այո		Հեռացել է
6		Աստուածատուրեան Տ.	Յովհանն.	10	Դղաթաքա (Որմի)	ոչ	»	
	5	Ակէեան Լուսիկ	Ղուկաս	5	Կոփ գ. (Բուլանըխ)	»	»	
	6	» Նանսо	»	5	» » »	»	մայր	
	7	» Քիշմիշ		9	» » »	այո	հայր	
7		Այվազեան Տիգրան	Խաչիկ	9	Արճէշ	»	»	
8		Աւետիսեան Դանիէլ	Մուշեղ	8	Խլաթցի	»	»	
9		Այվազեան Բերոբ	Խաչիկ	7	Արճէշ	»	մայր	
10		Ալեքսանեան Ալեքսի	Ղազար	5	Մահլազոն գ.	ոչ	»	
11		Ալեքսանեան Մկրտիչ	Սմբատ	10	Ալեքսանդրապոլ	»	»	
12		Աստուածատուրեան Ե.	Արփիար	13	Բիթլիզեցի	այո	»	
13		Աւետիսեան Ազատ	Ստեփան	8	Մուշ	ոչ	»	Հեռացել է
14		Աղաբաբեան Վռամ		10	Էրզրումցի	»	»	Հեռացել է
15		Աղաբէկեան Հմայեակ	Գէորգ	9	Բուլանըխցի	»	»	Հեռացել է
16		Աղաբէկեան Արմենակ	»	7	»	»	»	Հեռացել է
	8	Աւօեան Արուսեակ	Յարութ.	11	Ղալասար գ. (Սալմ.	այո	»	Վախճան.
	9	Ասլօմանուկեան Սօնա		11	Լիզ գ. (Բուլանըխ)	ոչ	ոչ	Հեռացել է
17		Ասլօմանուկեան Զար.		9	» » »	»	ոչ	Հեռացել է
18		Աւետիսեան Միսաք	Ստեփան	11	Մշեցի	»	մայր	Հեռացել է
19		Բաբօեան Արիստակէս	Գրիգոր	6	Բայազիտ	»	»	
20		Բաբօեան Յովհաննէս	»	15	»	այո	հայր	
21		Բաբօեան Վրթանէս	»	6	»	»	»	
22		Բաղդասարեան Յովհ.	Մելքոն	11	Տարավան գ. (Մշու	»	»	
	10	Բաղդասարեան Ֆար.	»	10	» » »	»	հայր և մ.	
	11	Բարսեղեան Աշխէն	Աւդալ	9	Խլաթ	»	» »	
23		Բարսեղեան Ռուբէն	Աւդալ	7	» ի Կոշտեան գ.	ոչ	մայր	
24		Բաղշեան Արամ	Եփրեմ	8	Ջալալ-Օղլի	այո	չունի	Հեռացել է
25		Բաբօեան Գէորգ	Գրիգոր	11	Բայազիտ	այո	հայր	

Թիֆլիսի Հայ Եկեղեցիի. Միաբանութ. եւ Հոգաբարձութիւնն

Տարի	Աղբիւր	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	Հայրանուն	Տարիք	Ծննդավայր (քաղաք գիւղ)
	12	Գէորգեան Շուշանիկ	Գէորգ	10	
26		Գասպարեան Գասպ.	Մանուկ	12	Մալաքեանդ գ.
27		Գրիգորեան Մուշեղ	Մարտիր.	9	Մուշ.—Նորշէն գ
	13	Զատիկեան Հռիփսիմէ	Պապան	12	Շավշէթ գ. (Արդվ
	14	Զատիկեան Նունէ	»	7	» » »
	15	Զատիկեան Մարիամ	»	5	» » »
28		Զօհրաբեան Ադասի	Խաչատ.	8	Ճլօխան գ.
29		Թէրլէմէզեան Ոսկան	Գրիգոր	7	Վան
30		Խաչատուրեան Անդր.	Մկրտիչ	4	Վան
	16	Խաչատուրեան Աղնիւ	Գրիգոր	11	Այգեպատ գ. (Բաս
31		Խաչատուրեան Լեոն	»	6	Համզաշէյխ գ.
32		Խչէեան Անդրանիկ	Պետրոս	10	Բեր. (Ալաշկերտ)
	17	Խաչատուրեան Շող.	Գրիգոր	15	Այգեպատ գ. (Բաս
	18	Խալաթեան Աշխէն	Թումաս	6	Վան
	19	Խոսրովեան Վարս.	Մելքոն	10	Արճէշ
	20	Խոսրովեան Վարդուհի	»	5	»
	21	Խաչատուրեան Աստղ.	Խաչատ.	5	Արդահան
	22	Խաչատուրեան Արուս.	»	4	»
33		Կարապետեան Սարգ.	Մկրտիչ	11	«Իրիցու գ.» (Ալ
	23	Հասրաթեան Զուարթ	Հասրաթ	4	Շէյխեաղուկ գ. (Բո
	24	Հասրաթեան Նուարդ	Հասրաթ	9	» » »
34		Համբարեան Սմբատ	Մանուկ	9	Եաղան գ. (Բասե
35		Ղազարեան Դաւիթ	Սարգիս	13	Զիրօ գ. (Ալաշկեր
36		Ղարբուզեան Յովհ.	Գրիգոր	11	Ղարաքիլիսա (Ալ
37		Ղազարեան Մեսրոպ	Խուրշուտ	9	Խլաթի Կոշտեան
38		» Տիգրան	»	10	» »
39		Մանուկեան Սարգիս	Մանուկ	6	Հարսանքար գ.
	25	Մանուկեան Սիրանոյշ		3	Մուշ
40		Մարտիրոսեան Բաղդ.	Մուրադ	12	Շէյխեաղուբ գ. Բ
41		Մելիքեան Յովհաննէս	Խաչատ.	9	Էրզրում
	26	Մինասեան Արուսեակ	Տէր-Մատ.	3	Նազարավան գ. Աբ
42		» Եսայի	»	16	» » »
43		» Յովհան.	»	10	» » »
44		Մկրեան Խաչիկ	Անտոն	13	Բօմլիկ (Պոլիս)
45		Մկրտչեան Աւետիս	Միհրան	7	Բերդակ գ. (Վան
46		» Վաղինակ	Նշան	7	» » »

Յանձնաժողովի որբերի անուանացուցակը սկզբից մինչեւ այժմ.

Գրագէտ է	Ծնող ունի՞	Հեռացել է	
»	չունի		
»	մայր		
ոչ	»	Հեռացել է	
այո			
ոչ	չունի		
»	»		
»	»		
»	մայր		
»	»		
այո	չունի		
ոչ	մայր		
այո	չունի		
»	»		
»	մայր		
»	»		
ոչ	»		
»	հայր և մ.	Հեռացել է	
»	»	»	
այո	չունի		
ոչ	հայր և մ.		
այո	» »		
ոչ	չունի		
այո	»		
»	հայր		
»	չունի		
»	»		
ոչ	»		
»	մայր		
այո	»		
»	»		
ոչ	չունի		
այո	»		
»	»		
»	հայր		
ոչ	հայր և մ.		
այո	չունի		

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI 1922
ИМЕНИ А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Տող	Ադիվ	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	Հայրանուն	Տարիք	Ծննդավայր (Քաղաք գիւղ)	Գրագէտ է	Ծնող ունի՞	Հեռացել է
47		Մովսիսեան Կարապ.	Սարգիս	10	Ջադ գ. (Արճէշ)	այո	մայր	Հեռացել է
48		Մուշեղեան Նահապետ	Մուշեղ	11	Կողակ գ. (Բուլան.)	»	հայր	
	27	Մարգարեան Սիրան.	Սարգիս	9	Կոփ, (Բուլանըխ)	»	չունի	
	28	Մանուկեան Հայկան.	Նշան	9	Մխկներ գ. (Վան)	ոչ	»	
	29	» Նոյեմզար	»	6	» » »	այո	»	
	30	Մբրտոյեան Սարբէ	Մէջիտ	9	Կոփ, (Բուլանըխ)	ոչ	»	
	31	» Քիշմիշ	»	6	» »	այո	հայր	
	32	Մօսօեան Դիլպար	Մօսօ	8	Վան	»	»	
	33	Մուշեղեան Լուսիկ	Մուշեղ	8		ոչ	չունի	
	34	Մարօեան Գիւլիզար	Մարօ	14	Վան	»	ոչ	
49		Մուրադեան Յովսէփ	Գրիգոր	9	Յունան գ. (Մուշ)	»	ոչ	
50		Մկրեան Սամսոն	Գէորգ	6	Վան	»	մայր	
51		Մելքոնեան Յովհան.	Մելքոն	8	Կոփ (Բուլանըխ)	այո	մայր	
52		Մարտիրոսեան Վարդ.	Մարտիրոս	10	Էրզրում,—Աբլանցի	»	»	
53		» Սամուէլ	»	9	» »	»	մայր	
54		Մելքոնեան Կարապետ	Աբդար	10	Վանեցի	ոչ	հայր	Վախճ. է
55		Մարգարեան Մովսէս	Սարգիս	5	Կոփ—(Բուլանըխ)	ոչ	մայր	Հեռացել է
56		Մրտօեան Մխիթար	Յակօ	9	» »	այո	»	Հեռացել է
57		Մարտիրոսեան Արամ		4	Վանեցի	ոչ	»	Հեռացել է
58		Մանուկեան Ազատ		7	Մուշ	այո	»	Հեռացել է
59		Մանուկեան Մկրտիչ		11	Խաչերով գ. (Ալաշկ)	ոչ	»	Հեռացել է
60		Մկրտչեան Թոռնիկ		6	Վանեցի	այո	»	Հեռացել է
61		Մուրադեան Ներսէս	Մուրատ	15	Բաշկալա	այո	»	
	35	Յարութիւնեան Ալմ.	Յարութ.	11	Վան	ոչ	չունի	
62		Յարութիւնեան Զուլ.	»	6	Խաստուր գ. (Ալաշ.)	ոչ	մայր	
	36	Յարութիւնեան Հայ.	»	7	Վան	այո	»	Հեռացել է
63		Յարութիւնեան Սմբ.	Ղազար	14	Խաստուր գ. (Ալաշ.)	ոչ	հայր	
64		Յարութիւնեան Վարդ.	Յարութ.	9	Քերծ գ. (Վան)	այո	չունի	
65		Յովհաննիսեան Մխ.	Մարտիր.	12	Մալա Սլեման գ.(Ալշ.	»	հայր	
	37	Յարութիւնեան Անթ.	Յարութ.	15	Քերծ գ. (Վան)	»	չունի	
	38	Յովհաննիսեան Շուշ.	Յակոբ	9	Վան	»	»	
66		Յովհաննիսեան Հմայ.	Ալէքսան	12	Արգան գ. (Մուշ)	ոչ	հայր	Հեռացել է
67		» Անդրան.	»	4	» » »	»	մայր	
68		Յովսէփեան Վարդգէս		7	Վան, Ուլուփաշայ	»	ոչ	
69		Յովակիմեան Պարգև	Յովակիմ	8	Շատախցի	»	մայր	Հեռացել է
70		Յակօեան Սամսոն		7	Էրզրում			

Տարի	Ակցիզ	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	Հայրանուն	Տարիք	Ծննդավայր (քաղաք գիւղ)	Գրագէտ է	Ծնող ունի՞	Հեռացել է
71		Յովհաննիսեան Եփր.		15	Բաշկալա	այո	հայր և մ.	Հեռացել է
	39	Յովհաննիսեան Սալվի	Աղիզ	10	Ուրմիա	»	մայր	Հեռացել է
72		Նազարեան Արտաշէս	Խոսրով	7	Բիթլիս	»	»	Հեռացել է
	40	» Ազգինէ	»	8	»	ոչ	»	Հեռացել է
73		» Սազատ	»	6	»	այո	»	Հեռացել է
74		Նազարեան Յուսիկ	Խոսրով	11	Բիթլիս	»	»	Հեռացել է
75		Նորամիրեան Հրանտ	Դաւիթ	12	Վան	»	»	Հեռացել է
	41	Նորամիրեան Նուարդ	»	15	»	»	չունի	
76		Նշանեան Անուշաւան	Նշան	7	Արտահանցի	»	»	
	42	Ումիրիկեան Փեփրոնէ	Միհրան	10	Էրզրում	»	ոչ	
77		Զթչեան Անդրանիկ	Սարգիս	8	Վան	»	չունի	
78		Պետրոսեան Արամ		9	Վանեցի	»	մայր	
	43	Պողոսեան Մարիամ	Գրիգոր	4	Քարվանսարա գ.	»	հայր	Հեռացել է
	44	Պողոսեան Սառա	»	7	» »	ոչ	»	
79		Պողոսեան Գէորգ	Պողոս	7	Մաշտակ գ.	այո	»	
80		Ռանճպարեան Գուրգ.		7	Վանի ն. Քիւրդեղիկ	այո	ոչ	
	45	Ռանճպարեան Մարգ.		10	» » »	ոչ	մայր	Հեռացել է
	46	Սահակեան Վարդուհի	Սահակ	5	Սալմաստ (Պարսկ.)	»	»	
	47	Սահակեան Վարսենիկ	»	8	» »	»	»	
	48	Սահակեան Շուշանիկ	Զաքար	7	Հացթան գ. »	»	»	
81		Սարգսեան Ղուկաս	Գրիգոր	14	Բնքդ (Ալաշկերտ)	»	»	
	49	Սիմոնեան Գուլի	Գասպար	5	Կոփ (Բուլանըխ)	»	»	
	50	Սիմոնեան Խանասլի	»	6	» »	»	»	
	51	Սիմոնեան Մարիամ	»	10	» »	»	»	
	52	Ստեփանեան Արուս.	Ստեփան	6	Էրզրում	այո	»	
	53	Սիմոնեան Հեղինէ	Վարդան	7	Գեալի գ. (Սասուն)	ոչ	»	Հեռացել է
82		Սահակեան Մուրատ	Այվազ	9	Խլաթցի	»	»	Հեռացել է
83		Սօլախեան Յովհաննէս	Պետրոս	11	Վան	»	»	Հեռացել է
	54	Սօլախեան Անահիտ		8	Վան	»	չունի	
84		Սամարճեան Վազգէն	Գրիգոր	6	Վան	»	հայր	
	55	Սուրէնեան Շամիրամ	Սուրէն	7	Էրզրում	այո	մայր	
	56	Վարդանեան Աշխէն	Վարդան	8	Նոր գ. (Վան)	այո	»	Հեռացել է
85		Վարդանեան Եղիշէ	Մուշեղ	12	Փիծնք գ. (Բուլան.)	ոչ	»	Հեռացել է
86		Վարդանեան Գալուստ	Մուշեղ	9	» » »	ոչ	»	Հեռացել է
	57	Վառվառեան Սիրան.		7	Կոփ (Բուլանըխ)	այո	չունի	
87		Տէր-Խաչատրեան Ա.	Կիրակոս	10	Զէտկան գ. (Ալաշկ.)	ոչ	մայր	Հեռացել է
						այո	»	
						»	»	
						»	»	

Տող	Աղյուկ	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	Հայրանուն	Տարիք	Ծննդավայր (Քաղաք գիւղ)	Գրագէտ է	Ծնող ունի՞	Հեռացել է
88		Տէր-Խաչատրեան Յով.	Մանուկ	9	Զէտկան գ. Բուլանըխ	այո	մայր	
89		Տէր-Ղազարեան Մուշ	Կարապետ	7	Կոփ » » »	ոչ	»	
	58	Տէր-Ղազարեան Ն.	»	9	» »	այո	»	
90		Տէր-Մանուէլեան Տ.	Յովանէս	12	Օքրօպակերտ գ. Արդ.	»	չունի	Հեռացել է
91		Տէր-Սահակեան Գէորգ	Աւետիս	8	Լիզ գ. (Բուլանըխ)	ոչ	»	
92		Տէր-Սահակեան Գաս.	»	7	» » »	այո	»	
93		Տէր-Սահակեան Սեր.	Միսաք	9	» » »	ոչ	մայր	
	59	Տիգրանեան Ասանէթ	Տիգրան	9	Մանազկերտ	ոչ	»	
	60	Տիգրանեան Վիքտ.	»	7	»	այո	»	
94		Տօնեան Մխիթար	Զաքար	13	Խաստուր գ. (Ալաշկ.	»	»	
	61	Տէր-Մինասեան Եղիս.	Տէր-Յովս.	14	Բեբդ (Ալաշկերտ)	»	»	
	62	Տէր-Մինասեան Նազ.	» »	10	» »	»	չունի	
95		Տօնօեան Ցօլիկ	Մկրտիչ	10	Էրզրում	ոչ	հայր և մ.	
96		Տէր-Աստուածատր. Ա.		5	Մուշ	այո	հայր	Վախճն. է
97		Տէր-Աստուածատր. Ս.		8	»	այո	»	
98		Տէր-Աստուածատր. Ա.		11	»	ոչ	մայր	Հեռացել է
	63	Փափազեան Հեղինէ	Փափազ	6	Վան	այո	»	
99		Փափազեան Գրիգոր		5	Էրզրում	»	»	
100		Քերոբեան Մուկուչ	Աւդալ	6	»	»	»	
101		Քերոբեան Աղասի	»	10	»	»	»	
	64	Քերոբեան Անահիտ	Մկրտիչ	8	»	ոչ	»	Հեռացել է
	65	Օվօեան Հրանոյշ	Մկրտիչ	9	»	ոչ	»	Հեռացել է
102		Օսկօեան Վաղարշակ	Սահակ	6	Ղարաքիլիսէ (Ալաշկ.	այո	չունի	
103		Քրմօեան Վաղիկ	Տիգրան	9	Բայազիտ			

Թիֆլիսի հայ ծխ. համայնքի Յանձնաժողովի Ա. ՈՐԲԱՆՈՑԻ

1916—17 ԹՈՒԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Որբանոցում դպրոցական պարապմունքներն սկսուել են 1915 թուի յուլիս 27-ին, բայց տեխնիկական և այլ անյարմարութիւնների պատճառով, շատ անկանոն են եղել։ Իսկապէս դպրոցը բացուել է նոյն թուի դեկտեմբեր 16-ին։ Բացման օրից մինչև 1916 թուի փետրուար 1-ը, ուսումը առաջ է տարուել բանաւոր կերպով։ Փետրուար 1-ից վերջացած լինելով Որբանոցի շէնքի պատշգամբի նորոգութիւնը, նաև գրատախտակ ունենալով, հնարաւոր եղաւ սկսել դպրոցական կանոնաւոր պարապմունքները։ Կազմուած բաժանմունքները, ըստ պատրաստութեան ունեցել են հետևեալ պատկերը։ Աշակերտները բաժանուել են երեք խմբի. Ա. 10—13 տարեկան անգրագէտ մեծերը կազմել են I (մեծեր) բաժանմունք, Բ. 7—10 տարեկան անգրագէտ փոքրերը—կազմել են I (փոքրեր) բաժանմունք. Գ. Ճնացածները 11—14 տարեկան, որոնք արդէն մէկ-երկու տարի սովորելիս են եղել Տաճկաստանում, կազմել են II բաժանմունք։ Ունեցել է շաբաթական 21 դաս. և դասաւանդել է հետևեալ առարկաները—կրօն, հայերէն, թուաբանութիւն, երգգիտութիւն և մարմնամարզ։

1916 թուի մարտ 25-ին հրաւիրել է մէկ դասատու ևս՝ վարժուհի, շաբաթական 18 դասով, որը դասաւանդել է ռուսերէն և թուաբանութիւն։

1916 թուի փետրուար 1-ից մինչև նոյն թուի հոկտեմբեր 1-ը,—դպրոցի ուսումնական առաջին շրջանն էր, իսկ հոկտեմբեր 1-ից մինչև օրս տևածը՝ երկրորդ շրջանը։

Ծանօթ. Բացման շրջանին սովորող տղաների թիւը եղել է 32, աղջիկներինը՝ 7. իսկ այժմ I որբանոցի դպրոցում 52 տղայ. իսկ երկրորդ որբանոցի դպրոցում 37 աղջիկ։

ՄՈՒՏՔ 1915 թ.

Ծխական տուրք	1843 83	
Յանձնաժ. տուփերից	644 60	
Հանգանակութիւն	1650 43	
Նուէրներ	1510 70	
Թիֆ. քահ. տպահ. զանձ.	200 —	
Պետական նպաստ	157 50	
,,Լումայի'' հրատարակութիւնից	2716 57	
Բնակար. վարձ	50 —	8773 63

ԵԼՔ 1915 թ.

Մթերք	2030 18	
Զգեստ	876 65	
Վառելիք	211 62	
Կահաւորութ.	848 02	
Դեղորայք	14 74	
Մաքրութիւն	34 69	
Բնակարան. վարձ	400 —	
Նորոգութիւն	1355 48	
Ռոճիկ	832 50	
Հանդ. ծախք ,,Լումայ'' թերթի	628 10	
Ճանապարհածախք (որբանոցի տեղափոխութիւն և այլն)	291 65	
Մանր ծախք	462 93	7986 56
Մնացորդ առ 1 յունուար 1916 թ.		787 07
		8773 63

ՄՈՒՏՔ 1915 թ. ընթացքում

ԾԽԱԿԱՆ ՏՈՒՐՔ

Աւետեաց եկ. Արշ. ք. Մինասեանի և հոգաբար. Մկ. Մաղաքեանի միջոցով . . .	500	—
Կուկիոյ Նորաշէն ս. Աստուածածին եկ. երեսփոխ Գ. Ճոնեանի, հոգ. Ա. Թումանեանի, միաբան քահանաների միջոցով . .	373	54
Ս. Կարապետ եկ. Միաբան. և Հոգաբարձ. միջ.	283	60
Թանդոյեան եկ. միաբան. Յ. քահ. Ճուղուրեանի միջոցով	127	54
Բեղդեհէմ եկ. Միաբան. և Հոգաբարձ. միջոց.	106	30
Զուղուրէթի եկ. միաբ. Յ. ք. Իւզբաշեանի միջ.	55	—
Էջմիած. եկ. Միաբ. և Հոգաբարձ. միջ. .	54	90
Կաթողիկէ ս. Գէորգ եկ. » » .	46	50
Զորաբաշի եկ. միաբ. Գր. ա. ք. Մանդակունու միջոցով	46	—
Ս. Նշան եկ. Գր. ք. Շերմազանեանի և Հոգաբարձ. միջոցով.	81	90
Հրեշտակապ. եկ. երեցփոխի և ծխ. քհ. միջ.	42	—
Ս. Սարգիս եկ. Միաբան. և Հոգաբարձ. միջ.	37	10
Նաւթլուղի եկ. Ա. ա. ք. Վարդանեանի միջ.	13	45
Վանքի ա. եկ. Գիւտ ա. ք. Աղանեանի միջ. Մ. Բերբերեանից	18	—
Շամքոռեց. եկ. Համ. ա. ք. Տէր-Յովհաննիսեանի միջոցով	58	—
Գումար	1843	83

ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏՈՒՓԵՐԻՑ

Վանքի աւագ եկեղեցում . .	50	23
Քամոյեան եկեղեցում . . .	216	73
Թանդոյեան » . . .	61	64

Զրկինեանց ս. Կարապետ եկեղեցում	33	88
Զգրաշէն ս. Աւետեաց եկեղեցում .	48	28
Ս. Սարգիս եկեղեցում . . .	26	56
Կուսանաց ս. Ստեփան եկեղեցում .	19	—
Կուկ. Նորաշ. ս. Աստ. » .	26	38
Ս. Մինաս եկեղեցում . . .	20	80
Մողնու ս. Գէորգ եկեղեցում . .	37	31
Նորաշէն եկեղեցում . . .	19	85
Կաթողիկէ ս. Գէորգ եկեղեցում .	17	96
Շամքոռեցոց եկեղեցում . .	15	71
Խոջիվանքի եկեղեցում . . .	11	83
Ս. Կարապետ եկեղեցում . .	7	97
Զուղուրէթի ս. Աստուածածին եկեղ.	6	48
Էջմիածնեցոց եկեղեցում . .	11	17
Զորաբաշի եկեղեցում . . .	2	27
Հրեշտակապետ եկեղեցում . .	—	83
Քարափի ս. Գէորգ եկեղեցում .	—	33
Բեղդեհէմի ս. Աստուածածին եկեղ.	4	13
Վերայի եկեղեցում . . .	2	23
Լուսաւորիչ եկեղեցում . . .	3	03
Գումար	644	60

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ժամանակաւոր կոմիտ. միջ. հանգ. Զրօրհ. օրը	513	67
Վանքի ա. եկ. Գ. ա. ք. Աղանեանի և այլ. միջ.	526	58
Քամոյենց եկ. երեց. Մ. Իւզբաշեանի միջոց.	61	80
Մողնու ս. Գէորգ եկ. Հոգ. Ս. Մուրադբ. միջ.	47	58
Զորաբաշի եկ. Գր. ա. ք. Մանդակունու միջ.	34	70
Զրկինենց ս. Կարապ. եկ. Հոգաբարձութ. »	28	99
Աւետեաց եկեղեցու Հոգաբարձութեան »	31	26
Ս. Մինաս » » »	22	41
Կաթողիկէ ս. Գէորգ եկեղ. հոգաբարձ. միջոց.	18	73
Էջմիածնեցոց եկեղեցու Հոգաբարձութ. միջ.	10	20

Զուղուրէթի ս. Աստ. եկ. երեցփոխի միջոցով.	22	—
Լուսաւորիչ եկ. երեցփոխի միջոցով . .	10	20
Նաւթլուղի եկեղեցու երեցփոխի միջոցով .	7	61
Ս. Կարապետ եկեղեցու երեցփոխի միջոցով .	6	32
Վերայի գերեզմ. » » » »	5	40
Ս. Սարգիս » » » .	5	31
Հրեշտակապետաց եկեղեցու երեցփոխի միջոց.	5	19
Խօջիվանքի եկեղեցու երեցփոխի միջոցով .	4	10
Ս. Նշան եկեղեցու երեցփոխի միջոցով . .	3	59
Քարափի ս. Գէորգ եկեղեցու երեցփ. միջոցով	3	20
Շամքոռեցոց եկեղեցու երեցփոխի միջոցով .	21	—
Կաթողիկէ ս. Գէորգ եկեղեցու երեցփ. միջոց.	40	—
» » եկ. Մ. Յարութիւնեանի միջ.	8	36
Ծաղկեվանքում	5	60
Շահնաբադում	7	25
Գերեզմանատան մեռելոցներին . . .	198	77
Գումար	1650	43

ՆՈՒԷՐՆԵՐ

Տիկին Աւան-Իւզբաշեանից սրբ. Առաջ. միջոց.	100	—
Քաղաքապ. Ա. Խատիսեանից բժ. Մինասեանի միջ.	500	—
Դասաւորող հիւանդ. ծառայողներից » »	127	—
Պարոնջանբէկեան Գաբր.	10	—
Ս. Յակովբեանի որդու մկրտ. Գ. ք. Մեհրաբեանի միջոցով	13	40
Ալիքազեանի որդու մկրտութ. Յ. Աբազեանի միջ.	15	—
Աղելիանեանի թաղիքի մասի բանուորներից Յ. Աբազեանի միջոցով.	53	70
Տիկին Նունէ Ալիբէկեանից Յ. Աբազեանի միջ.	5	—
Յովհ. Սարգսեանից Գ. ա. ք. Մանդակունու միջ.	5	—
Բազր. Մեսրոբեանից » »	3	—

Լիզա Մանուչարեանի թաղման Ա. ա. ք. Վարդանեանի միջոցով	7	45
Մի ոմն	10	—
Ստ. Սաղոյեանից և որդիներից՝ առաջինի ամուսնու և միւսների մօր յիշատ. Գ. ա. ք. Աղանեանի միջոցով.	40	—
Վասիլ (Ղազար) Ալ. Պապովից Գ. ա. ք. Աղանեանի միջոցով	50	—
Վարդ. Մ. Մանուկեանից Գ. ա. Աղանեանի միջ.	50	—
Պետ. Պ. Յարութիւնեանից » »	50	—
Կրպ. Յ. Բարխուդարեանից » »	50	—
Բարեշն կոյս Թայիրեանից » »	3	—
Գր. Շահումեանից մատաղի փոխ. » »	5	—
Զար. Մութաֆեանից Գր. ա. ք. Երզնկեանի միջ.	10	—
Ս. Յ. Սափարեանից իր ամուսն. յիշ. » »	10	—
Հ. Զ. Տէր-Պողոսեանից » »	15	—
Զանազան անձերից Յ. ք. Ճուղուրեանի միջ.	7	50
Գր. և Բազ. Յովակիմեաններից » »	15	—
Գ. Եսայեանի նշանադր. հանդ. » »	21	50
Յակ. Սաֆարեանից » »	12	—
Մարտ. Ալէքսանդրեանից » »	25	—
Տիկին Մ. Բանաթրեանից » »	3	—
Գր. Չիբուխչեանից » »	4	—
Ալ. Տէր-Բարսեղեանի պսակի հանդիս. Յ. ք. Տէր-Պետրոսեանի միջոցով	19	15
Գ. Սիմէօնեանից Խ. ք. Խուցեանի միջոցով .	10	—
Մանէ Խուդադեանից » » .	5	—
Հանդ. Ա. Սիմէօնեանի ժառանգ. » .	100	—
Մի խումբ մարդկանցից » .	33	—
Օլգա Շահբազեանից Ղ. ք. Ալիխանեանի միջոց.	2	—
Էլիբէգեանից » »	3	—
Օր. Վառ. Մակարեանից Ս. ք. Երզնկեանի միջ.	5	—

Հանգ. Անանա Ղասումեանի ժառ. » »	50	—
Վահ. Զալաբեանի որդու մկրտ. Ն. ք. Քարիմ-եանի միջոցով	50	—
Յ. Զատոյեանից Մ. Յարութիւնեանի միջոցով.	3	—
Փիրադեանից Ղարաքիլիսում Ա. Աբովեանի միջ.	5	—
Ռոստոմեանից » » »	5	—
Գումար	1510	70
«Լումայի միօրեայ վաճառումից . . .	2716	57

Ն Պ Ա Ս Տ Ն Ե Ր

Կենդրոն. Կոմիտէից սրբ. առաջնորդի միջոցով	157	50
Քահանայից ապահովագր. գանձարանից . .	200	—
Ղարաքիլիս. որբանոցի նախկին շինութ. վարձ	50	—

Ծխական տուրք	1843	83
Յանձն. տուփերից	644	60
Հանգանակութիւն	1650	43
Նուէրներ	1510	70
«Լումայից»	2716	57
Նպաստներ	407	50
Ընդամեն	8773	63

ՄՈՒՏՔ 1916 թ.

Մնացորդ առ 1-ն յունվ.			787 07
Ծխական տուրք . . .	30	50	
Յանձնաժ. տուփեր . . .	258	09	
Հանգանակ.	184	42	
Նուէրներ	1477	20	
Թիֆ. քահան. ապահ. գանձ. .	1200	—	
Պետական նպաստ . . .	16571	69	
,,Լումայի'' վաճառումից . .	838	96	20560 86
Առ 1-ն յունվ. 1917 թ. մուտքից աւել է ծախսուած			3175 03
			24522 96

ԵԼՔ 1915 թ.

Մթերք	9783	12	
Զգեստ	4716	09	
Մաքրութիւն	382	67	
Վառելիք	1058	17	
Կահաւորութիւն	745	35	
Դեղորայք	43	95	
Ուսման պիտոյք . . .	417	52	
Ռոճիկ	2546	91	
Բեմոնտ	2659	61	
Բնակարանի վարձ . . .	1300	—	
Մանր ծախք	869	57	24522 96

1916 Թ.

ՆՈՅԵՐՆԵՐ

Յով. Պապովիցէ իր հանգուցեալ որդի Գուրգէնի յիշատ. Գիւտ ա. ք. Աղանեանի միջ.	50	—
Գ. Օքոյեանից Յ. Աբազեանի միջ.	10	—
Կ. Մաղաքեանից » »	5	—
Աֆրիկեանից Մեսրոպ սրբազանի միջ.	60	—
Քաղ. Ա. Ի. Խատիսեանից բժ. Ե. Մինասեանի միջ.	800	—
Ե. Ներսիսեանից իր հանգուցեալ մօր յիշատ. հոգեհացի փոխ. Ս. ք. Երզնկեանի միջ.	25	—
Տիկ. Շուշ. Տէր-Յակովբեանից ի յիշ. Կ. Քանդաբեանի Յ. ք. Տէր-Պետրոսեանի միջ.	25	—
Բ. Ընկ. Յիլինվալի ճիւղից Խ. ք. Խուցեանի միջ.	10	—
Յ. ք. Ճուղուրեանից իր հանգ. ամուսնու յիշատակին «Հորիզոնի» միջոցով	12	—
Աւան Իւզբաշեանից իր հանգ. որդու յիշատ. որբ. ճաշի համար Գ. ա. ք. Աղանեանի միջ.	160	—
Ռոմիսար Վարդանեանի մօրից իր որդու յիշատակին Գ. ա. ք. Աղանեանի միջոցով	100	—
Թաշճեանից որբանոցի կառավարչուհու միջոց.	2	—
Եղբ. Սահաթճեաններից «Մշակի» խմբ. միջ.	100	—
«Գիր» գրախանութից	3	20
Ղազ. և Սարգ. Ղազարեաններից իրանց մօր յիշատ. Գ. ա. ք. Գաբրիէլեանի միջոցով	15	—
Զլօեան Արամից որբան. կառավարչուհու միջ.	25	—
Տիկին Զաբել Մաղաքեանից	50	—
Գ. ա. ք. Աղանեանից	10	—
Բժ. Ե. Մինասեանից	10	—
Ս. Մուրադբէգեանից	5	—
Գումար	1477	20

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Վանայ մայր եկ. գաւթում ճրագալ. երեկոյեան և Ջրօրհնեաց օրը	141	80
Զգրաշէն ս. Աւետեաց եկ. ճրագալ. երեկ.	22	62
Քամոյենց եկ. Նազարբէկեանի թաղման օրը	10	—
,, ,, Խարազեանի ,, ,,	10	—
Գումար	184	42

ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏՈՒՓԵՐԻՑ

Քամոյենց եկեղ. տուփից	108	48
Զգրաշէնի ս. Աւետեաց եկ. տուփից	9	91
Կաթողիկէ ս. Գէորգ եկեղեցու տուփից	33	06
Ս. Սարգիս եկեղեցու տուփից	20	84
Թանդոյեան » »	34	75
Ս. Մինաս » »	5	72
Կարմիր Աւետարան » »	2	55
Էջմիածնեցոց » »	5	55
Մողնու ս. Գէորգ » »	18	76
Կուկիոյ Նորաշ՝ Աստուածած. եկ. տուփից	10	80
Հալաբարի ս. Կարապետ եկ. տուփից	7	67
Գումար	258	09

Պետակ. նպաստ. Հայկ. կենտ. Կոմիտէի միջ.			16571	69
Թիֆլիսի քահանայից ապահ. գանձարանից			1200	—
«Լումայի» վաճառ. Մեսրոբ սրբ. միջոց.			838	96
ԾԽԱԿԱՆ ՏՈՒՐՔ				
Յ. ք. Ճուղուրեանի միջոցով	16	50		
Գ. ա. ք. Աբուլեանի »	14	—	30	50

Նուէրներ	1477	20
Հանգանակութիւն	184	42
Յանձնած. տուփերից	258	09
Ծխական տուրքից	30	50
Նպաստ Թիֆլ. քահ. ապահ. գանձ. վարչութիւնից	1200	—
«Լումայ»-ի վաճառումից	838	96
Պետական նպաստ	16,571	69
	20,560	86

Յանձնաժողովի նախագահ Գիւտ ա. ք. Աղամեան
Փոխ-նախագահ բժ. Երուանդ Միքնասեան

Անդամներ
Սարգիս ա. ք. Ճիոյեան
Խորեն ք. Խուցեան
Յովսեփ Աբազեան
Մկրտիչ Մադամեան
Սարգիս Մուրադբեգեան

Անդամ-գանձապահ Սիմեոն Շանվերդեան

Անդամ-քարտուղարներ
Յարութիւն ք. Ճաստարեան
Մելիտոն Յարութիւնեան

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
* C.C.P.A Публичная Библиотека *
7/XI-1922
Инвент. Масинин
Ա. ՄՅԱՍՆԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

361
Բ-64

7013

ՀՀ Ազգային գրադարան
ՀՄՄՍL0049361